



EU4Climate
Better Climate Policies for Eastern Partner Countries

SGP The GEF
Small Grants
Programme



**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**



Մույն փաստաթուղթը կազմվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացված «Ազդակիր համայնքները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները որպես Հայաստանի էներգետիկայի և կլիմայի փոփոխության քաղաքականության մեջ սոցիալ-էկոլոգիական մշակույթի ներդրման մասնակիցներ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «ԵՄ-ն կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի և ՄԱԶԾ/ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի աջակցությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| Ներածություն | 4 |
| Մեթոդաբանություն | 5 |
| 1. Եղեգիս համայնքի ընդհանուր նկարագիրը | 6 |
| 2. Կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման պլանավորման և Փարիզյան համաձայնագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացման նախադրյալները Եղեգիս համայնքում | 9 |
| 3. Էներգիայի տեղական արտադրություն և հանրային շենքեր, շինություններ և օբյեկտներ | 10 |
| 4. Անտառային տնտեսություն | 14 |
| 5. Արդյունաբերություն | 15 |
| 6. Կոմունալ ծառայություններ և թափոններ | 15 |
| 7. Համայնքի հողային ռեսուրսներ | 17 |
| 8. Համայնքային բյուջեի մասին | 17 |
| 9. Համայնքի սուբվենցիոն ծրագրերը և հայտերը | 19 |
| 10. Եղեգիս համայնքի 2023-2027թթ. զարգացման ծրագիրը | 21 |
| 11. Միջազգային համագործակցություն | 22 |
| 12. Եզրակացություն | 23 |
| 13. Առաջարկություններ Եղեգիսի ՏԻՄ-ին | 24 |
| Հավելված 1 | 26 |
| Հավելված 2 | 27 |

ՀՀ կառավարությունը ուշադրության կենտրոնում է պահում կլիմայական, վերականգնվող էներգետիկայի, էներգաարդյունավետության և էներգախնայողության քաղաքականությունների իրականացումը: Այդ քաղաքականությունների մշակման և արդյունավետ իրականացման հարցում կարևոր է համայնքների ներգրավումը: Սակայն ինստիտուցիոնալ առումով համայնքները լիարժեք չեն մասնակցում այդ քաղաքականությունների կյանքի կոչման ծրագրերին: Եղեգիս համայնքի գրեթե բոլոր գյուղերը տեղակայված են Եղեգիս գետի և նրա վտակների հոսքի երկայնքով, ինչով էլ պայմանավորված է տեղի բնակչության գործունեության անմիջական կախվածությունը գետերի վիճակից: Գետերի վրա կառուցված է 17 փոքր ՀԷԿ, որոնց ճնշումը գետերի վրա դարձել է սոցիալ-տնտեսական զարգացման, կենսապայմանների ու կենսապահովման վրա ազդող հիմնական գործոն: Վատացել են ջրի ֆիզիկաքիմիական ցուցանիշները, գետի սանիտարական վիճակը, վերացել է հանգստի գոտիների մի մասը, ավիամերձ տարածքները կորցրել են կանաչ ծածկույթը, վատացել է միկրոկլիման:

«ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում էներգետիկայի և կլիմայական դիմակայության քաղաքականության ներդրման խնդիրները և առաջարկվող միջոցառումները» հաշվետվության նպատակն է.

- Նպաստել Եղեգիս համայնքի լիարժեք ներգրավմանը և իր շահերի պաշտպանությանը կլիմայական և էներգետիկայի ոլորտների պետական քաղաքականությունների վերաբերյալ որոշումների և համայնքին վերաբերող որոշումների ընդունման գործընթացում:
- Աջակցել համայնքի սոցիալական, էկոլոգիական և տնտեսական զարգացմանը՝ հասնելու կլիմայական արդարության և էներգետիկ աղքատության կրճատման:
- Մշակել առաջարկություններ համայնքի կլիմայի փոփոխության հարմարվողականության, կանաչ էներգետիկայի և կանաչ աշխատատեղերի ստեղծման, համայնքի կայուն զարգացման համար:

Հաշվետվության կառուցվածքը

1. ՀՀ Վայոց ձորի Եղեգիս համայնքի ընդհանուր նկարագիրը բաժնում ներկայացված է համայնքի աշխարհագրական դիրքի, կլիմայի, բնակչության զբաղվածության մասին տեղեկատվություն:
2. Կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման պլանավորման և Փարիզյան համաձայնագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացման նախադրյալները Եղեգիս համայնքում բաժնում ներկայացված են համայնքի՝ կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման պլանավորման հնարավորությունները:
3. Էներգիայի տեղական արտադրություն և հանրային շենքեր, շինություններ և օբյեկտներ բաժնում ներկայացված է տեղեկատվություն Եղեգիս համայնքում սպառվող/օգտագործվող էներգետիկ ռեսուրսների, համայնքում իրականացվող էներգախնայողության և էներգաարդյունավետության ծրագրերի, փոքր ՀԷԿ-երի խնդիրների, իրավակարգավորումների, առաջարկվող լուծումների մասին:
4. Անտառային տնտեսություն բաժնում ներկայացված են անտառօգտագործման հետևանքով առաջացած խնդիրները:
5. Արդյունաբերություն բաժնում ներկայացված են համայնքում գործող ընդերքօգտագործմամբ զբաղվող ընկերությունների տվյալները:

6. **Կոմունալ ծառայություններ և թափոններ** բաժնում ներկայացված են համայնքում կոշտ կենցաղային թափոնների հեռացման և աղբահանության իրավակարգավորման բացերը և առաջարկվող լուծումները:
7. **Համայնքի հողային ռեսուրսները** բաժնում ներկայացված են հողային ռեսուրսների մասին տվյալներ:
8. **Համայնքային բյուջեի մասին բաժնում** ներկայացված է Եղեգիս համայնքի 2023թ. բյուջեի նկարագրությունը:
9. **Համայնքի սուբվենցիոն ծրագրերը և հայտերը** բաժնում թվարկված են 2022-2023թթ. համայնքի կողմից ներկայացված սուբվենցիոն ծրագրերը:
10. **Եղեգիս համայնքի 2023-2027թթ. զարգացման ծրագիր բաժնում** վերլուծված են համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառված կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման ծրագրերը և դրանց իրականացման հնարավորությունները:
11. **Միջազգային համագործակցություն** բաժնում ներկայացված են միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող ծրագրերը՝ ուղղված բնության պահպանությանը և համայնքի կայուն զարգացմանը:
12. **Եզրակացություն** բաժնում ներկայացված են համայնքում կլիմայական և կանաչ էներգետիկայի քաղաքականության տեղայնացման խնդիրները, համայնքի կարիքները:
13. **Առաջարկություններ Եղեգիսի ՏԻՄ-ին** բաժնում ներկայացված առաջարկություններ՝ ուղղված Եղեգիսի ՏԻՄ-ին:
14. **Հավելվածներ:**
 - Հավելված 1:** Եղեգիս համայնքի վարչական տարածքում գտնվող ՓՀԷԿ-երի հիմնական ցուցանիշները
 - Հավելված 2:** Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանն ուղղված միջոցառումների օրինակներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվության կազմման տեղեկատվական հենք են ՀՀ կառավարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի, Եղեգիս խոշորացված համայնքի պաշտոնական կայքերը, Էներգետիկայի և կլիմայի փոփոխության ոլորտների վերաբերյալ ազգային և միջազգային համապատասխան իրավական ակտերը, փաստաթղթերը: Համայնքի մասնակցությունն ապահովելու, կարծիքների և առաջարկությունների ձևավորման նպատակով օգտագործվել են հաղորդակցության տարբեր միջոցներ՝ անմիջական շփումներ, հարցազրույցներ, քննարկումներ, ինչպես նաև հարցումներ ոլորտային մասնագետների, ֆոկլուս խմբերի և ՏԻՄ-ի հետ:



Նկար 1. «ԷկոԼուր»-ի թիմի հանդիպումները, հարցազրույցները, քննարկումները Եղեգիս համայնքում

Քննարկումներին մասնակցել է 45 մարդ, հարցազրույցներ անցկացվել է 11 անձի հետ, հարցումներին մասնակցել է 28 անձ:

1. ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Եղեգիս համայնքը գտնվում է Վայոց ձորի հյուսիս-արևելյան մասում՝ մարզկենտրոնից 12 կմ հեռավորության վրա: Համայնքում ընդգրկված է 16 գյուղ՝ Վարդահովիտ, Հերմոն, Գողթանիկ, Եղեգիս, Արտաբույնք, Հորբատեղ, Շատին, Հորս, Սալլի, Թառաթումբ, Քարազլուխ, Աղնջաձոր, Սևաժայռ, Կալասար, Գետիկվանք և Արատես: Համայնքի կենտրոնը Շատին գյուղն է:



Նկար.2 Եղեգիս համայնքի ընդհանուր պատկերը¹

Համայնքի վարչական տարածքը 47963,4 հա է: Համայնքում 2023թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվառված բնակչության թիվը 6327 է, որից 3057 կին, 3270 տղամարդ, տնային տնտեսությունների թիվը՝ 1953:

Համայնքի տարածքը հիմնականում զբաղեցնում է Եղեգիս գետի ջրահավաք ավազանը: Համայնքի տարածքով հոսող գետերն են Եղեգիսը՝ 47կմ երկարությամբ, Եղեգիսի Հորսի վտակը՝ 7կմ երկարությամբ, Թառաթումբ վտակը՝ 3կմ երկարությամբ, Աղնջաձոր վտակը՝ 5կմ

¹ <https://www.google.com/maps/>

երկարությամբ, Քարագլուխ վտակը՝ 15 կմ երկարությամբ, Արատեսը՝ 12 կմ երկարությամբ, Սև ժայռ՝ 15 կմ երկարությամբ, Արտաբույնքը՝ 18 կմ երկարությամբ:

Եղեգիս համայնքով է անցնում «Հերմոն-Ելփին» ոռոգման ջրագիծը: Ոռոգման նպատակով օգտագործվում է նաև Քարագլխի (0,18 մլն խմ տարողությամբ) և Հորսի (0,096 մլն խմ տարողությամբ) ջրամբարներում կուտակվող ջուրը:

2022 թ. Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ ըստ մոլիբդենի, 2023թ-ին՝ գնահատվել է «վատ» (4-րդ դաս)՝ ըստ կոբալտի:

Եղեգիսի վրա փոքր հիդրոէներգետիկայի զարգացման պատճառով խախտվել է գետի էկոհամակարգի հավասարակշռությունը, բարձրացել է ջրի ջերմաստիճանը, վերացել են գետում ապրող ձկնատեսակները:

Համայնքի Շատին բնակավայրի քարաթափման գոտիներում գտնվում է 31 և ավելի շենք-շինություն:

Եղեգիսի բնական պայմանները, հարուստ կենսաբազմազանությունը նպաստում են զբոսաշրջության, մասնավորապես, էկոտուրիզմի զարգացմանը: Համայնքում գործում է դիտակետ բեզուարյան այծերի և այլ կարմիրգրքյան և էնդեմիկ տեսակներին հետևելու համար:

Համայնքում կան պայմաններ էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական արտադրանք ստանալու համար:

Վերջին տասնամյակում Եղեգիս համայնքում դիտվում է կովկասյան գորշ արջի կողմից տնային տնտեսությունների վրա հարձակումների դեպքերի աճ, ինչի արդյունքում համայնքին հասցվում է նյութական վնաս:


1.1 Բնակչության զբաղվածությունը

Եղեգիսում աշխատատեղերի պակաս կա: Բնակչությունը հիմնականում զբաղվում է ավանդական անասնապահությամբ, այգեգործությամբ՝ խաղողի, ծիրանի, խնձորի, ընկույզի, կարտոֆիլի մշակմամբ, մեղվապահությամբ: Գյուղատնտեսության մեջ չեն ներդրվում ժամանակակից մոտեցումներ: Համայնքը գյուղմթերքի իրացման խնդիր ունի: Չեն գործում գյուղատնտեսական կոոպերատիվներ: Ցածր մակարդակի վրա է գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման կառավարումը, որտեղ պետական ինստիտուտների օժանդակության կարիք կա:

Զարգանում է զբոսաշրջային բիզնեսը:

Բնակչության մի մասն աշխատում է փոքր ՀԵԿ-երում, համայնքային ծառայությունների ոլորտում, փոքր առևտրային կրպակներում, հյուրատներում:

Եղեգիս համայնքի զարգացման տարբերակների վերաբերյալ հարցվածների կարծիքները բաշխվել են հետևյալ համամասնությամբ.



Նկար 3. Համայնքի զարգացման հեռանկարների վերաբերյալ կարծիքների բաշխումը

Կանանց հիմնական մասը զբաղված է գյուղատնտեսական աշխատանքով և տնային տնտեսությամբ: Կանայք նաև զբաղված են կրթական և ուսումնական հաստատություններում՝ մանկապարտեզներում և դպրոցներում:

Կանայք խոցելի են կլիմայի փոփոխության և էներգետիկ աղքատության տեսակետից: Իրենց վրա են կրում մաքուր էներգիայի աղբյուրների սահմանափակ օգտագործման, սոցիալական ցածր մակարդակի, էլեկտրաէներգիայի բարձր սակագնի հետևանքները:

1.2 Եղեգիսի կլիման

Վլիման մերձարևադարձային է, ձմեռը՝ ցուրտ, ամառը՝ շոգ: Ամենացուրտ ամիսը հունվարն է՝ - 32, ամենատաք հուլիսը՝ +38: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը կազմում 630 մմ:

Համայնքում առատ տեղումները դառնում են սելավների առաջացման, գետերի վարարման և հեղեղումների պատճառ: Գետերի վարարման դեպքում վնասվում են ցանքատարածությունները: Համայնքին բնորոշ է ցրտահարություն գարնանային ամիսներին: Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները հանգեցնում են նյութական և մարդկային կորուստների:

Քարազլիսի և Հոբսի ջրամբարների պատվարները վթարային են և դրանց փլուզման հետևանքով համայնքային հողերը ենթակա են ջրածածկման: Համայնքում անցյալ տարիներին կարկուտի հետևանքով բերքի կորուստը կազմել է 50 տոկոսից ավելի: Համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանությունը կարկտահարությունից այժմ իրականացվում է 7 զագագեներատորային հակակարկտային կայանների միջոցով: Նախատեսվում է առաջիկայում ավելացնել ևս 6 զագագեներատորային հակակարկտային կայաններ:

«ԷկոԼուր»-ի կողմից Եղեգիսի բնակչության և ՏԻՄ-ի ներկայացուցիչների հետ անցկացված հարցումների համաձայն՝ պտղատու այգիների և մշակաբույսերի բերքատվությունը և բերքի

որակն անկում է ապրել, բնական աղբյուրները ցամաքում են, ոռոգման ջուրը չի բավարարում: Սակավաջրության հետևանքով արոտավայրերի և խոտհարքների խոտածածկույթը նոսրացել է, նվազել է անասնակերը, ինչի հետևանքով կրճատվել է ընտանի անասունների գլխաքանակը: Վերջին 5-10 տարիների ընթացքում համայնքում կրճատվել են ցորենի, գարու, առվույտի, կարտոֆիլի, ծխախոտի ցանքսատարածքները, խնձորի այգիների մակերեսները, նվազել է ընկուզենիների բերքատվությունը, մեղրատվությունը: Բնակչության շրջանում նկատվում է սրտանոթային հիվանդությունների, արևահարության դեպքերի աճ, դիմադրողականության անկում, զարկերակային ճնշման տատանումներ, ինքնազգացողության վատացում:

Խնդիր

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը չի իրականացնում Եղեգիս համայնքի կլիմայական պայմանների փոփոխության վերլուծություն:

Գործողություններ

Առաջարկել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ին իրականացնել վերջին տարիներին Հայաստանի բոլոր համայնքների, այդ թվում Եղեգիսի կլիմայական պայմանների փոփոխության վերլուծություն և այն ներառել տարեկան տեղեկագրերում: Դա հիմք կհանդիսանա համայնքի կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումների մշակման համար:

Կլիմայի փոփոխությանը դիմակայության նպատակով անհրաժեշտ է տանել աշխատանքներ Քարագլխի և Հորսի ջրամբարների տարողունակությունների ավելացման և պատվարների ամրացման ուղղությամբ, ուժեղացնել հակակարկտային միջոցառումները:

2. ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓԱՐԻԶՑԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԳՐՈՎ ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Եղեգիս համայնքը չի միացել ԵՄ Քաղաքապետերի դաշնագրին:

«ԷկոԼուր»-ի անցկացրած հարցումների արդյունքների համաձայն՝ համայնքում Էներգախնայողության և Փարիզյան համաձայնագրի շրջանակներում կլիմայի փոփոխության դիմակայության, ջերմոցային գազերի նվազեցմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակը ցածր է. հարցվածների 85,7%-ն այդ մասին տեղյակ չէ, մնացածի տեղեկացվածությունն ամբողջական չէ:

Քաղաքապետերի դաշնագրին միանալը հնարավորություն կտա գնահատել Եղեգիսի պատրաստվածությունը՝ իրականացնելու սոցիալ-էկոլոգիական, էներգետիկ, կլիմայական միջոցառումներ և ծրագրեր, որոնք ուղղված կլինեն ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը՝ հաշվի առնելով համայնքի առանձնահատկությունները, հնարավորությունները և բարելավելով տնտեսական, սոցիալական և բնապահպանական

իրավիճակը: Այն կապահովի համայնքի կայուն, կանաչ զարգացումը և կնպաստի Փարիզյան համաձայնագրի շրջանակներում ՀՀ ստանձնած ԱՍԳ² պարտավորությունների կատարմանը:

3. ԷՆԵՐԳԻԱՅԻ ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՑԻՆ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐ

Համայնքը գազաֆիկացված չէ: Օգտագործում են հեղուկ գազ և էլեկտրական հոսանք, ինչպես նաև վառելիքայտ, աթար:

ՄԱԿ–ի հայաստանյան գրասենյակի, Վիվասել MTS-ի, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի աջակցությամբ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2018-2022թթ. իրականացվել է Շատին, Սալլի, Հորս, Արտաբույնք, Գողթանիկ, Եղեգիս, Հերմոն, Աղնջաձոր, Թառաթումբ գյուղերի արտաքին լուսավորության ցանցի անցկացումը: 2023թ. մի քանի գյուղերի առկա ցանցում լրամշակումներ կատարելուց հետո կամբողջանա համայնքի լուսավորության համակարգը: Նախատեսվում է ՀՀ կառավարության և Եղեգիսի համայնքապետարանի միջոցներով 2023թ. ավարտին հասցնել փողոցային լուսավորությունը, որը կարժենա 35 միլիոն դրամ:

WWF-Հայաստանի կողմից իրականացվող «Հայաստանի կենդանի լանդշաֆտները շուկայի զարգացման համար» ծրագրի աջակցությամբ Եղեգիս համայնքում տեղադրվել է 40 կիլովատ հզորությամբ արևային կայան, որի արտադրած էլեկտրաէներգիայի շնորհիվ խնայված գումարները կօգտագործվեն արջերի կողմից գյուղացիներին հասցված վնասի փոխհատուցման նպատակով: Ստացիոնար կայանից բացի համայնքը ստացել է ևս 5 հատ 2 կիլովատ հզորությամբ շարժական հիբրիդային արևային կայան, որոնք ըստ անհրաժեշտության կօգտագործվեն համայնքում և հեռագնա արոտներում:




Նկար 3. Արևային կայանի տեղադրում Եղեգիս համայնքում

Համայնքի հանրային նշանակության շենքերը կարիք ունեն ջերմակայուն վերանորոգման:

Տնային տնտեսություններում օգտագործվող էներգակիրների դիմաց կատարվող տարեկան ծախսերն ըստ հարցվածների կազմում են. վառելիքայտ՝ ամռանը՝ 20 000 դրամ, ձմռանը՝ 200 000 դրամ, էլեկտրաէներգիա՝ ամռանը՝ 8 000 դրամ, ձմռանը՝ 20 000 դրամ, օգտագործվում է նաև ածուխ, աթար: Ծախսերի կրճատման, անտառի վրա ճնշման մեղմման համար հարցվածների կարծիքները բաշխվել են հետևյալ կերպ.

² <https://www.e-gov.am/gov-decrees/item/36064/>

Էներգակիրների դիմաց կատարվող ծախսերի կրճատմանն ուղղված միջոցառումների հարաբերակցությունը, %



Նկար 4. Էլեկտրաէներգիայի դիմաց վճարումների կրճատման և անտառի վրա ճնշման նվազեցմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ հարցվածների կարծիքների բաշխում

Ցածր մակարդակի վրա է նոր տեխնիկական միջոցների խնամքի և վերականգնման ծառայությունների մատուցումը: Անհրաժեշտ է ֆինանսական ռեսուրսներ նախատեսել այդ համակարգերի տեղադրումից հետո դրանց պահպանման և վերանորոգման ծախսերի համար:

Էներգետիկայի ոլորտում անհրաժեշտ է նվազեցնել վառելիքայտի և էլեկտրաէներգիայի համար ծախսերը սեփական արևային էլեկտրակայանի շահագործման շնորհիվ:

Հիդրոէներգետիկա

Եղեգիս գետի և նրա վտակների վրա կառուցված է 13 կազմակերպության 17 ՓՀԷԿ (Հավելված 1), որոնցից 15-ը Եղեգիս համայնքի վարչական տարածքում: Դրանց ընդհանուր հզորությունը կազմում է 42595,2 կՎտ, տարեկան արտադրությունը՝ 99,255 մլն.կվտ/ժ, իսկ նրանց խողովակաշարի ընդհանուր դերվացիայի երկարությունը՝ 36576,5 մ:

Ըստ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայքի՝ Եղեգիս գետի և նրա վտակների վրա էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվելու նպատակով 2023թ. հունվարի 1-ի դրությամբ 5 կազմակերպության ևս տրված է էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա: Այդ կազմակերպությունների փոքր ՀԷԿ-երը դեռևս գտնվում են կառուցման փուլում: Դրանք են՝ «Էրիեմ Էներջի» ՍՊԸ-ի «Ռիսկ²», «ՎՏՎ Էներջ» ՍՊԸ-ի «Եղեգնուտ -2», «ՎՏՎ Էներջի» ՍՊԸ-ի «Էլիս ²», «Ռուս ընդ հար» ՍՊԸ-ի «Տիգրան Մեծ²», «Սերա» ՍՊԸ-ի «Խաչքար -1», «Հոստուն» ՍՊԸ-ի «Սելիմե» ՓՀԷԿ-երը:

Կառուցվող ՓՀԷԿ-երի գումարային ընդհանուր նախագծային հզորությունը կազմելու է 16891կվտ, իսկ տարեկան արտադրված ընդհանուր էլեկտրաէներգիան համապատասխանաբար կազմելու է 49,98 մլն. կվտ/ժ: Այս ամենի հետևանքով Եղեգիս գետի և նրա վտակների ջրերը մտնելու են գումարային 12433 մ դերվացիայի երկարությամբ խողովակաշարի մեջ:

Չհաշված Եղեգիս գետը սնող վտակների վրա կառուցված ՓՀԷԿ-երը, բուն Եղեգիս գետի վրա կառուցված ՓՀԷԿ-երի շահագործման արդյունքում, գետի հոսքը դերիվացված է 51.46%-ով, իսկ նախատեսվող ՓՀԷԿ-երի շահագործման դեպքում այդ մեծությունը կհասնի 76.69%-ի, ինչն արգելված է ՀՀ ջրային օրենսգրքով:

Ըստ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից Շատին, Հերմոն և Եղեգիս բնակավայրերի բնակիչների հետ անցկացրած հարցման³, ՓՀԷԿ-երի քանակի ավելացումը համայնքում հանգեցրել է տեղական միկրոկլիմայի փոփոխության: Զգացվում է խոնավության պակաս:

Վերջին տարիներին զգալի են ծառերի չորացման դեպքերը:



Նկար 6. Եղեգիս գետի ափամերձ տարածքի չորացած ծառեր Գետիկ բնակավայրի տարածքում

Եղեգիս գետում պակասել է ջրհոսքը, գետում վերացել է «կարմրախայտ» ձկնատեսակը: ՓՀԷԿ-երն իրենց գործունեության ժամանակ հաճախ չեն պահպանում գետի բնապահպանական թողքը, խաթարում են ոռոգման համակարգի աշխատանքը, առաջացնում են ոռոգման ջրի սակավություն: Վատանում են բնակիչների կենսապայմանները: Հաճախակի են ՓՀԷԿ-ի խողովակաշարի վթարի հետևանքով բնակիչների մշակովի հողամասերի ողողումների դեպքերը:



Նկար 7. Փոքր ՀԷԿ-ը Եղեգիս գետի վրա

³<https://www.ecolur.org/hy/news/water/13239/>



Նկար 8. Եղեգիս գետը փոքր ՀԷԿ-ի կողմից ջրառից հետո

Գործողություններ

1. Ի լրումն Վերնաշեն-70, Հերմոն-71, Շատին-72, Արտաբուրք-73 և Շատին-74 մակերևութային ջրերի հիդրոլոգիական դիտակետերի, տեղադրել նոր դիտակետեր ՓՀԵԿ-երի ազդեցության գոտիներում:

Իրավակարգավորում

2019թ. հունիսի 28-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի 30.1 հոդվածի համաձայն⁴ նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մերժվում են, եթե՝

1) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը նախատեսվում է այն գետերի վրա՝
ա. որոնցում առկա են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր,
բ. որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է,
գ. որոնց վրա կան ջրաչափական դիտակետեր և նախատեսվող ջրառի և ջրահեռացման նիշերը շրջանցում են ջրաչափական դիտակետերը.

2) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումն իրականացվում է՝
ա. Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում,
բ. բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում,
գ. բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում,
դ. ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներում,
ե. գետերի հոսքի ձևավորման տարածքներում,
զ. գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ,
է. անտառային հողերում կամ տարածքներում, որտեղ շինարարական տարածքին մոտեցող ճանապարհներ կառուցելու նպատակով առաջանում է ծառեր հատելու անհրաժեշտություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 20-րդ հոդվածով նախատեսված պետական անտառային հողերում աշխատանքների իրականացման համաձայնության առկայության դեպքերի:

⁴ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=132103>

Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված գետերի ցանկը սահմանում է Կառավարությունը:

Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ե» ենթակետով նախատեսված սողանքային տարածքները սահմանում է Կառավարությունը:»:

ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 8-ի 488-Ն որոշմամբ⁵ մերժվում է ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը 25 գետերի վրա փոքր ՀԷԿ-եր կառուցելու համար: Այդ գետերի ցանկում են Եղեգիսը, Եղեգիս գետի Կարակայա վտակը, Կարակայա վտակի Այսաս վտակը:

2022թ. հուլիսի 7-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքը, որի համաձայն՝ բնօգտագործման վճար կգանձվի հիդրոէլեկտրակայաններից 1 խմ-ի համար 0,1 դրամի չափով: Օրենքն ուժի մեջ կմտնի 2024թ-ի հունվարի 1-ից⁶:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության վերլուծության ու հաշվարկների համաձայն՝ 2017-2019թթ.-ին հիդրոէլեկտրակայանների կողմից օգտագործված ջրի ծավալը միջինում կազմել է 6,2 միլիարդ խմ: Հետևաբար, սահմանված դրույքաչափով բնօգտագործման վճարներից պետությունը տարեկան կավելանան մոտավոր 620 միլիոն դրամով:

Առաջարկություն
Փոքր հիդրոէլեկտրակայանների վճարած բնօգտագործման վճարները նպատակահարմար է ուղղել ազդակիր համայնքներում կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման, էներգախնայողության և էներգաարդյունավետության ծրագրերի իրականացմանը:

4. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Եղեգիս համայնքի որոշակի հատված գտնվում է «Հայաստան» ՊՈԱԿ-ի Վայոց ձորի անտառտնտեսության (ընդհանուր տարածքը՝ 15050.96 հա, որից անտառածածկ է 7656,2 հա) Եղեգիսի անտառպետության տարածքում (2445 հա): Անտառների հիմնական խնդիրներն են՝ ապօրինի անտառօգտագործումը, արածեցումը, հրդեհները, անտառային տեսակների հիվանդությունները և վնասատուները: Կլիմայի փոփոխության հետևանքով անտառները ենթարկվում են մեծ ճնշման: Փոփոխվում են ծառերի աճի համար բարենպաստ պայմանները, անտառային տարածքները կորցնում են իրենց կենսունակությունը: Եղեգիսում հանդիպումների ժամանակ բնակիչները նշեցին, որ իրենց տրամադրվում է մինչև 5 խմ թափուկ, ինչը խիստ անբավարար է ձմռանը ջեռուցում ապահովելու համար:

Գործողություններ

1.Ներդնել հասանելի էներգետիկ տեխնոլոգիաներ, որպեսզի համայնքը հրաժարվի վառելիքայտից: Սրան կարող է նպաստել համայնքի Քաղաքապետերի դաշնագրին միանալը՝ ստանալու անհրաժեշտ փորձագիտական խորհրդատվություն

⁵ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=151502>

⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166211>

Էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ, ինչպես նաև այլ միջազգային ծրագրերին մասնակցությունը:

2. Կազմակերպել համայնքապետարանի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների, բնակչության համար Էներգախնայողության և կլիմայական քաղաքականությունների, կլիմայի փոփոխության մեջ անտառի դերի վերաբերյալ իրազեկման միջոցառումները:

5. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրում իրականացվում է Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասում երկրաբանական աշխատանքների ծրագիրը: Խախտվել է մոտ 100 000 խմ հողային ռեսուրս՝ մեծամասամբ ալպիական մարգագետիններ: Տարածքը նաև վայրի կենդանիների էկոմիջանցք է: Ըստ տեղաբնակների՝ Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման ծրագիրը բացասական ազդեցություն կունենա ջրի աղբյուրների վրա:



Նկար 9. Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի մարգագետիններում բացված ճանապարհ

6. ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐ

Եղեգիս համայնքի 16 գյուղերից 12-ում ներկայում պայմանագրային հիմունքով աղբահանությունն իրականացնում է «Եղեգնաձորի ԲԿԿ» ՍՊԸ-ն: Հավաքված աղբը տեղակայվում է Եղեգնաձորի աղբավայրում: Եղեգիսի ավագանու 2022թ. հուլիսի 15-ի 85Ա որոշման համաձայն⁷ շաբաթվա կտրվածքով համայնքից աղբավայր է տեղափոխվում մոտ 14 խմ աղբ:

«Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի համաձայն⁸՝ աղբավայրը տեղակայված է Եղեգնաձորից 5-10 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 1.7 հա տարածք: Այն գործում է 1961 թ-ից: Աղբավայրում տարեկան տեղադրվում է մոտ 1100 տոննա աղբ: Աղբավայրը չունի պարսպապատում, պահակակետ, ջրամատակարարում և էլեկտրամատակարարում: Աղբավայրում իրականացվում են հողածածկման աշխատանքներ հարկ եղած ժամանակ: Աղբավայրի տարածքում առկա էին

⁷ <https://yeghegis.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=3afc282d-b0fa-487f-8096-388144e2806d>

⁸ <http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/tarekan/Annual-19.pdf>

բազմաթիվ այրման օջախներ: Աղբավայրում չեն իրականացվում հակահրդեհային կանխարգելիչ աշխատանքներ:

Հայաստանում ընդունված միջին ցուցանիշի համաձայն կատարված հաշվարկով Եղեգիս համայնքի բնակչության կողմից տարեկան առաջանում է 923 տոննա կոշտ կենցաղային թափոն (6327 մարդ x 0.4 կգ օրական x 365 օր):

Համաձայն Եղեգիսի 2023-2027թթ. զարգացման ծրագրի՝ աղբը համայնքի բնակավայրերում թափվում է բնակավայրերին մոտիկ ձորակներում՝ տարերայնորեն, ճանապարհներից ոչ հեռու տարածքներում, որը կործանարար է շրջակա միջավայրի, հարակից պտղատու այգիների և ընտանի կենդանիների համար: Ինքնակամ աղբակույտերից արտանետվող ջերմոցային գազերը չեն ներառվում ջերմոցային գազերի կադաստրում:




Նկար 10: Ինքնակամ աղբակույտ Արտաբույնք բնակավայրում

ՏԻՄ-ը չունի բավարար ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներ «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանվող՝ ՏԻՄ-երի իրավասությունների չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացման, համայնքում սպառման թափոնների տեսակավորված հավաքման համակարգի ներդրմանն աջակցության համար:

| Գործողություն |
|---|
| 1. Լրացումներ կատարել «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքում՝ ընդլայնելով ՏԻՄ-ի լիազորությունները՝ ամբողջացնելով ՏԻՄ-ի լիազորություններն աղբահանության կազմակերպման և աղբավայրերի կառավարման գործում: |
| 2. Համայնքի զարգացման հնգամյա ծրագրում նախատեսել համայնքում նոր՝ օրինական և կառավարելի աղբավայրի հիմնում: |
| 3. Գործող աղբավայրը համապատասխանեցնել սանիտարական չափորոշիչներին: |
| 4. Նոր կառուցվող աղբավայրը ներառել ջերմոցային գազերի ռեեստրում: |
| 5. Մշակել բնակավայրերի աղբահանության միջոցառումների պլան, ինչը կապահովի անկառավարելի աղբակույտերի չեզոքացումը: |
| 6. Կանխարգելել հողի աղտոտումը, որը կնպաստի աղբավայրից ջերմոցային գազերի արտանետված քանակությունների կրճատմանը: |

7. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը 43294,69 հա է, վարելահողերինը՝ 1860,11 հա, պտղատու այգիները՝ 72,53 հա, խաղողի այգիներ՝ 10,93 հա, արոտները՝ 24555,48 հա, խոտհարքները՝ 1876,74 հա, չմշակվող հողերը՝ 11072 հա: Ունի անտառածածկ տարածք (Եղեգիս անտառպետություն՝ մակերեսը 2445 հա)⁹:



Նկար 11. Եղեգիսի համայնքային հողերն ըստ նպատակային նշանակության

Խնդիր

Համայնքային նշանակության 68045,12 հա հողերից 29767,55 հա ունի «պարապուրդի» կարգավիճակ հիմնականում Հորբատեղ, Աղնջաձոր, Գողթանիկ, Վարդահովիտ բնակավայրերում:

6,75 հա համայնքային հողեր կառավարման իրավունքով տրված են հիդրոտեխնիկական և ջրտնտեսային այլ օբյեկտների, 4242,13 հա-ն տրված են վարձակալության, 6,1 հա-ն օտարված են:

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

Եղեգիս համայնքի 2023թ. բյուջեի եկամտային մասը կազմում է 229 միլիոն 507 հազար 700 դրամ, որից սեփական եկամուտները 73 միլիոն 300 հազար դրամ, պետական դրամաշնորհները՝ 2 միլիարդ 34 միլիոն 277 հազար դրամ: Բյուջեի սեփական եկամտային մասն ըստ տեսակների ներկայացված է աղյուսակ 1-ում:

⁹ https://www.yeghegis.am/upload/DocFlow/Projects/Th232231652362134_2023.pdf

Եղեգիս համայնքի 2023թ. բյուջեի սեփական եկամուտները¹⁰

| Եկամտատեսակ | Տարվա ճշտված պլան (հազար դրամ) |
|--|-----------------------------------|
| Ընդամենը | 73 300 |
| Գույքային հարկեր անշարժ գույքից | 10 200, 2 |
| Հողի հարկ | 1 800 |
| Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 200 000 |
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 1 800 |
| Անշարժ գույքի հարկ | 8 200 |
| Գույքային հարկեր այլ գույքից , այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 28 800 |
| Տեղական տուրքեր | 1 000 |
| Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ | 12 800 |
| Այլ եկամուտներ | 8 000 |

Եղեգիս համայնքի 2023թ. բյուջեի ծախսային մասը կազմում է 3 միլիարդ 813 միլիոն 749 հազար դրամ, որից աշխատավարձերը և հավելավճարները կազմում են 108 միլիոն դրամ:

«Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի պահպանման ընդհանուր ծախսերը կազմում են 12 միլիոն 200 հազար դրամ:

Համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսային մասն ըստ ՏԿԵՆ-ի¹¹

| Ծախսային մասի տեսակ | Հազար դրամ |
|------------------------------|--------------|
| Ընդամենը | 3 813 |
| Աշխատավարձեր և հավելավճարներ | 130 000 |

¹⁰ <https://www.mtad.am/pages/budgetary-revenues-ra-communities>

¹¹ <https://www.mtad.am/pages/budget-expenditures-of-ra-communities>

| | |
|---|----------|
| Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում, այդ թվում՝ | 55 070 |
| Էներգետիկ ծախսեր | 14 000 |
| Կոմունալ ծախսեր | 8 000 |
| Կապ | 2 000 |
| գործուղման ծախսեր | 400 000 |
| պայմանագրային այլ ծառայություններ | 6 500 |
| ընդհանուր բնույթի ծառայություններ | 3 500 |
| նյութեր | |
| Սուբսիդիաներ | 18 600 |
| Դրամաշնորհներ | 18 600 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 5 500 |
| Այլ ծախսեր | 51 057,7 |
| Պահուստային ֆոնդից կատարվող հատկացումներ | 50 057,7 |
| Մեքենաներ և այլ սարքավորումներ | 24 900,0 |
| Շենքեր և շինություններ | 67 540,4 |

Խնդիր

Համայնքն, ունենալով 73 միլիոն 300 հազար դրամ սեփական եկամուտ, միայն 130 միլիոն դրամը ծախսում է աշխատավարձերի և հավելավճարների համար: Այսինքն, համայնքը չունի բավարար սեփական եկամուտ համայնքի կարիքների, անհրաժեշտ ծառայությունների մատուցման համար՝ լինելով բյուջետային մշտական դեֆիցիտի մեջ: Դեֆիցիտը համայնքը ծածկում է պետական միջոցներից՝ ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներից և պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներից:

9. 2022 ԵՎ 2023ԹԹ. ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ վարչապետի 2019 թվականի մարտի 19-ի թիվ 278-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2023թ.Եղեգիս համայնքի համար հավանության է արժանացել 3 ծրագիր:

Աղյուսակ 3

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի ընդհանուր արժեքը, դրամ | Համայնքի ներդրումը, դրամ | Պետական համաֆինանսավորումը, դրամ | ԿՓ ուղղվածություն |
|-----|------------------|-------------------------------|--------------------------|----------------------------------|-------------------|
|-----|------------------|-------------------------------|--------------------------|----------------------------------|-------------------|

| | | | | | |
|----|---|--------------------|-------------------|--------------------|------------------------------|
| 1. | ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ, Քարագլուխ, Աղնջաձոր, Հերմոն, Հորբատեղ, Գողթանիկ, Հորս և Եղեգիս բնակավայրերի ոռոգման առուների վերանորոգում | 179 368 782 | 62,779,074 | 116,589,708 | Հարմար վողակա նություն |
| 2. | Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի խմելու ջրի արտաքին ցանցի վերակառուցում և Սալլի, Հորս, Գողթանիկ բնակավայրերի խմելու ջրագծերի կառուցում | 50,099,771 | 17,534,920 | 32,564,851 | Հարմար վողակա նություն |
| 3. | Եղեգիս համայնքի Շատին, Աղնջաձոր, Թառաթումբ, Քարագլուխ և Արտաբույնք բնակավայրերի փողոցային լուսավորության ցանցի կառուցում | 43,147,887 | 19,416,549 | 23,731,338 | Մեղմու մ |
| | Ընդամենը | 272 616 440 | 99,730,543 | 172,885,897 | |

2022թ. Եղեգիս համայնքի համար հավանության է արժանացել 5 ծրագիր:

Աղյուսակ 4

| Հ/ h | Ծրագրի անվանումը | Ծրագրի ընդհանուր արժեքը, դրամ | Համայնքի ներդրումը , դրամ | Պետական համաֆինանս ավորումը, դրամ | ԿՓ ուղղվածու թյուն |
|---------|--|--|---------------------------------|--|------------------------------|
| 1. | Եղեգիս համայնքի Քարագլուխ, Սալլի, Աղնջաձոր, Թառաթումբ, Հորս, Հորբատեղ, Արտաբույնք ոռոգման առուների կառուցում | 166 320 840 | 58,212,294 | 108,108,546 | Հարմարվո ղականութ յուն |
| 2. | Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի հողատարածքի գնում | 12,170,000 | 6,693,500 | 5,476,500 | |
| 3. | Եղեգիս համայնքի Շատին և Վարդահովիտ բնակավայրերի ոռոգման առուների կառուցում | 77,925,370 | 23,377,611 | 54,547,759 | Հարմարվո ղականութ յուն |
| 4. | Եղեգիս համայնքի Եղեգիս, Գողթանիկ, Քարագլուխ, Շատին և Թառաթումբ բնակավայրերի խմելու ջրի ջրագծերի վերանորոգում | 45,694,480 | 15,993,068 | 29,701,412 | Հարմարվո ղականութ յուն |

| | | | | | |
|----|--|-------------|-------------|-------------|---------|
| 5. | Եղեգիս համայնքի Շատին, Հորս, Քարագլուխ, Հերմոն, Թառաթումբ և Աղնջաձոր բնակավայրերի փողոցային լուսավորության ցանցի կառուցում | 34,223,050 | 15,400,373 | 18,822,678 | Մեղմում |
| | Ընդամենը | 336,333,740 | 119,676,846 | 216,656,895 | |

Խնդիր

2023թ. համայնքի սեփական եկամուտները կազմել են 73 միլիոն 300 հազար դրամ: Համայնքի բյուջեի ծախսային մասը կազմել է 3 միլիարդ 813 միլիոն 749 հազար դրամ: Սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ է գտնել լրացուցիչ ֆինանսավորում:

10. ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2027ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ըստ Եղեգիս համայնքի 2023-2027թթ. զարգացման ծրագրի¹² էներգախնայողության և կլիմայի փոփոխության հարմարվողականության են ուղղված համայնքային հետևյալ ծրագրերը.

| | Ծրագրի նկարագրությունը | Բյուջե, հազար ՀՀԴ | Ֆինանսավորման աղբյուրը | ԿՓ ուղղվածությունը |
|----|---|-------------------|--|----------------------|
| 1. | Համայնքի փողոցների լուսավորություն | 35000,0 | | Մեղմում |
| 2. | Խմելու և ոռոգման ջրի խողովակաշարի վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ Եղեգիս համայնքի բոլոր գյուղերում | | | Հարմարվողականություն |
| 3. | Հակակարկտային կայանների տեղադրում | | | Հարմարվողականություն |
| 4. | Համայնքում մանկական խաղահրապարակների ստեղծում և մանկապարտեզների կառուցում | 900000 | Հայկական Կարմիր Խաչ և միջազգային դոնոր կազմակերպություններ | Մեղմում |
| 5. | Անասնախմբոցների տեղադրում և մակատեղիների | | Ռազմավարական զարգացման գործակալություն Վայրի բնության և | Հարմարվողականություն |

¹² https://www.yeghegis.am/upload/DocFlow/Projects/Th232231652362134_2023.pdf

| | | | | |
|----|--|----------------------|--|-------------------------------|
| | կառուցում մի շարք գյուղերում: | | մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ. այլ կազմակերպություններ | |
| 6. | Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում | 65 000 | Բարեգործական հիմնադրամներ կամ դրամաշնորհային ծրագրեր | Մեղմում, հարմարվողականություն |
| 7. | 67 կվտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում համայնքային ենթակայության շենք-շինությունների տանիքներին | 21 574 | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի աջակցությամբ | Մեղմում |
| 8. | Հերմոն-Վարդահովիտ ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ | 350000 | Համաշխարհային բանկ | Մեղմում |
| 9. | Գազաֆիկացում | Գումարը բացակայում է | Սուրվենցիոն ծրագրեր | Հարմարվողականություն |

11. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ընդգրկված է «Հարավային Կովկասում էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցության» երկրորդ փուլի ծրագրում և «Հայաստանի կենդանի լանդշաֆտները շուկայի զարգացման համար» ծրագրում: «Հարավային Կովկասում էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցության»-II ծրագիրը ֆինանսավորվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) կողմից՝ KfW բանկի միջոցով, իսկ «Կենդանի լանդշաֆտները շուկայի զարգացման համար Հայաստանում» ծրագիրը ֆինանսավորվում է Շվեյցարիայի կառավարության կողմից՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության միջոցով (SDC): Ծրագիրը նպատակ ունի գործնական եղանակով համակցելու բնության պահպանությունը տնտեսության աճին, որպեսզի այն տեղի բնակչությանը տեղական բնական ռեսուրսների առավել տնտեսական և կայուն շահագործման եղանակով բերի եկամուտներ՝ առանց վնասելու այդ տարածքները: Ծրագիրն իրականացվում է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) կողմից՝ «Ռազմավարական, զարգացման գործակալություն» և «ԷկոԼուր» ՀԿ-ների հետ համագործակցությամբ:

12. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

- ✓ Եղեգիս համայնքը խոցելի է կլիմայի փոփոխության նկատմամբ: Համայնքում շատացել են հիդրոտեխնոլոգիայի վտանգավոր երևույթները՝ կարկուտը, հեղեղներն, սելավները, հողի դեգրադացումը, ինչից տուժում է հողագործությունը, այգեգործությունը, անասնապահությունը, դիտվում է բնական ջրհոսքերի նվազում, աղբյուրների ցամաքում:
- ✓ Համայնքապետի աշխատակազմը բնական (կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող վտանգավոր հիդրոտեխնոլոգիայի վտանգավոր երևույթներ) և արհեստածին (հիդրոտեխնոլոգիայի կառույցների, ՓՀԵԿ-երի գլխամասային ջրընդունիչների տեխնիկական անվտանգության պահպանման համակարգերի վթարներ) աղետների դիմակայման համար չունի վաղ ազդարարման համակարգերի և դիմակայման ներուժ:
- ✓ Համայնքի տարածքում նախատեսվող միջոցառումները և ծրագրերը պահանջում են ավելի հստակ գնահատականներ ջերմոցային գազերի արտանետումների կրճատման, կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման տեսանկյունից:
- ✓ Համայնքի զարգացման ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման համար պահանջվող ներդրումները հնարավոր չէ ապահովել համայնքային բյուջեի սուղ միջոցների հաշվին:
- ✓ Գյուղատնտեսական նշանակության հողի կատեգորիան փոփոխելիս՝ այդ հողերը կլիմայական տեսանկյունից չեն գնահատվում, հաշվի չի առնվում հողերի բերրիության, հողում կուտակված ածխածնի կորուստը:
- ✓ Գյուղատնտեսական նշանակության հողերի զգալի մասը չի օգտագործվում:
- ✓ Համայնքի բնակավայրերը չունեն օրինակելի և կառավարելի աղբավայրեր, ինչպես նաև նախկինում ինքնակամ առաջացած աղբակույտների չեզոքացման խնդիր:
- ✓ Վերջին տարիներին Եղեգիս համայնքի սուբվենցիոն ծրագրերի զգալի մասն ունեն կլիմայական ուղղվածություն և համահունչ են պետական էներգետիկ և կլիմայական քաղաքականությանը, սակայն այդ ծրագրերը հիմնավորված չեն էներգախնայողության չափորոշիչների պահպանման տեսակետից, ինչը կարող է ապահովել համայնքի սոցիալական մակարդակի բարձրացում:
- ✓ Կանայք որոշումների կայացման գործընթացի ակտիվ մասնակից չեն և ընդգրկված չեն կլիմայական և էներգետիկ ծրագրերում, չեն կարողանում պաշտպանել իրենց շահերը:
- ✓ Համայնքում առկա ջրասակավորությունը հիմնականում պայմանավորված է կլիմայի փոփոխությամբ, ինչպես նաև փոքր ՀԵԿ-երի խիտ ցանցով: Զգացվում է խոնավության պակաս:
- ✓ Համայնքը զագաֆիկացված չէ, և առկա է ճնշում անտառի նկատմամբ:
- ✓ Առկա է աշխատատեղերի պակաս:
- ✓ Խմելու ջրի և ոռոգման ցանցի խողովակաշարերի հիմնովին մաշված են: Համայնքը չի օգտվում «Եղեգնաձոր» ՋՕԸ-ի ծառայություններից:
- ✓ Գործող բիզնեսի՝ համայնքի տարածքում շահագործվող ՓՀԵԿ-երի՝ համայնքի նկատմամբ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն անբավարար է:
- ✓ Էներգախնայողության և կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման վերաբերյալ բնակչության տեղեկացվածության մակարդակը ցածր է:

Համայնքի կայուն զարգացման հնարավորություններ

- Համայնքի տարածքում շահագործվող ՓՀԵԿ-երից հնարավոր ֆինանսական միջոցներ էներգախնայողության և կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման ծրագրերի իրականացման համար:

- Էներգետիկ աղքատության նվազեցման նպատակով համայնքային նշանակության սեփական արևային կայանի կառուցման նախաձեռնություն, ինքնավար արևային կայանների, ջրատաքացուցիչների ներդրման խթանում:
- Կլիմայակայուն գյուղատնտեսության զարգացում և դրա հիման վրա գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնում:
- Զբոսաշրջության զարգացման համար բարենպաստ պայմանների առկայություն՝ պատմամշակութային հարուստ ժառանգություն, էկոլոգիապես մաքուր գյուղմթերքի արտադրություն:
- Վերականգնվող էներգետիկայի զարգացման և կլիմայական ուղղվածության ծրագրերի շնորհիվ միացում ԵՄ Քաղաքապետերի Դաշնագրին՝ ստանալով փորձագիտական աջակցություն:

13. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՂԵԳԻՍԻ ՏԻՄ-ԻՆ

1. Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման տրամաբանության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում համայնքի տարածքում գործող վերականգնող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող կայաններ շահագործող ընկերությունների հետ կնքել համագործակցության պայմանագրեր համայնքային էներգախնայողությանն ու կլիմայի հարմարվողականությանն ուղղված ծրագրերի իրականացման համար ընկերությունների կողմից մասհանումների վերաբերյալ:
2. Համայնքային բյուջեի ծախսային մասում ներառել «տարվա բնապահպանական, կլիմայական, էներգետիկ ծրագրերի, աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման ծախսեր» բաղադրիչը:
3. Էներգետիկ աղքատության կրճատման, բնական, արհեստածին աղետների և կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմման, դիմակայման ու կանխարգելման համար ստեղծել մասնագիտական խումբ: Այդ խմբի համար սահմանել լիազորությունների, պարտականությունների և պատասխանատվության կոնկրետ շրջանակներ: Բացել էներգետիկ կառավարչի հաստիք:
4. Համայնքապետարանի աշխատակազմում ձևավորել ֆոնդ՝ միջազգային ծրագրերին մասնակցության համար տարվող աշխատանքները մասնագիտական կառույցներին պատվիրակելու համար:
5. Ստեղծել նախադրյալներ ՀՀ կառավարության «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրին, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի առաջին փուլի (2022-2024 թվականներ) իրագործումն ապահովող ծրագրի 54-րդ կետով նախատեսվող արևային, հողմային, ինչպես նաև կենսազանգվածային էներգիայի կայանների ծրագրերի իրականացման համար համագործակցելու մասնավոր հատվածի հետ՝ վառելիքայտի պահանջարկը նվազեցնելու և այն վերականգնվող էներգիայի աղբյուրներով փոխարինելու նպատակով:
6. ՀՀ կառավարության «Էներգախնայողության Համայնքի զարգացման հնգամյա և սուբվենցիոն ծրագրերը մշակելիս հաշվի առնել կլիմայի փոփոխության մեղմման, հարմարվողականության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական քաղաքականության տեղայնացման կարևորությունը և բնակչության իրական

կարիքները, համայնքում սոցիալական արդարության ու էներգամատչելիության ապահովումը, այդ միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացում ապահովել հանրության բավարար մասնակցության բաղադրիչները:

7. Տանել աշխատանքներ ԵՄ Քաղաքապետերի դաշնագրին միանալու ուղղությամբ:
8. Մշակել արոտավայրերի օգտագործման և պահպանման միջոցառումների պլան՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների՝ «Բնակավայրերի համար կլիմայի փոփոխության և հարմարվողականության ծրագրերի մշակման վերաբերյալ» մեթոդական ուղեցույցի:
9. Վերականգնվող էներգետիկայի բիզնեսի կողմից հաստատված բնապահպանական և սոցիալական ազդեցությունը մեղմող հիմնական միջոցառումների պլանների կատարումը մշտադիտարկելու համար ստեղծել աշխատանքային խումբ համայնքապետարանին կից հանրության մասնակցությամբ:
10. Նախաձեռնել համայնքային արևային կայանների կառուցման ծրագիր համայնքում կայուն եկամուտների ապահովման և կենսաբազմազանության, հատկապես անտառային տարածքների վրա ճնշման մեղմացման և էներգետիկ աղքատության նվազեցման նպատակով:
11. Էներգախնայողության և կլիմայական քաղաքականությունների վերաբերյալ կազմակերպել և իրականացնել իրազեկման միջոցառումներ համայնքապետարանի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների, բնակչության համար:
12. Համայնքի բնակչության սոցիալական վիճակի բարելավման, եկամուտների բարելավման համար համայնքի տարածքում հատկացնել գյուղմթերքի վաճառքի կիրակնօրյա շուկաների կազմակերպման տարածքներ գյուղամթերքների իրացման խրախուսման նպատակով, ապահովել շուկաների գովազդը, այս հարցում ֆինանսական աջակցություն ստանալու համար դիմել միջազգային դոնոր կազմակերպություններին:
13. Բարձրացնել կանանց ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում և կլիմայական և էներգետիկ ծրագրերում:

Եղեգիս համայնքի վարչական տարածքում գտնվող ՓՀԵԿ-երի հիմնական ցուցանիշները

| Ընկերության Անվանումը | ՓՀԵԿ-անվանումը | Լիցենզիայի համարը | Լիցենզիայի Գործողության ժամկետը | Հզորությունը, կվտ | Էլեկտրական էներգիայի փաստացի միջին տարեկան օգտակար ատաքումը, մլն. կվտ/ժ | Ջրաաղբյուրը | Դերիվացիայի երկարությունը. |
|-------------------------|-----------------|-------------------|---------------------------------|-------------------|---|---|----------------------------|
| «ԷԼԵԳԻՍ ՀԵԿ» ՍՊԸ | «Եղեգիս» | 107 | 2033թ. | 800,0 | 4,64 | Էլեգիս գետ | 4000,0 |
| «ԲԱԶԵՆՔ» ՓԲԸ | Եղեգիս-1 | 133 | 01,12,2031 թ. | 950 | 24,81 | Եղեգիս | 136,2 |
| «ԷԼԵԳԻՍ ՀԵԿ» ՍՊԸ | «Հերմոն» | 221 | 27.10.2036 | 1 200 | 4,0 | Էլեգիս գետի Այսասի վտակ | 1 907,00 |
| «ՀԱԿ ՀԵԿ» ՍՊԸ | «Կարակայա» | 300 | 08 10 2023թ. | 3018 | 4,23 | Կարակայա գետի ն նրա աջակողմյա վտակի վրա | 1260+3127 |
| «ՀԵՐՄՈՆ ՄԱԴ» ՍՊԸ | «Քարազուլի» | 314 | 25.03.2024 | 1570 | 1,73 | Քարազուլի | 1935+1390 |
| «ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» ՍՊԸ | «Սուրբ աղբյուր» | 323 | 22.07.2024 թ. | 737 | 2,36 | Եղեգիս գետի Արտաբույնք վտակ | 1536,0 |
| «ՍԱՆՌԱՅ Զ ԷԼԵԿՏՐԻԿ» ՓԲԸ | «Սանրայգ» | 342 | 29.12.2024 | 959 | 1,5 | Էլեգիս գետի Կարակայա վտակ | 2268,0 |
| «ՎԱՐԴԱՀ ՈՎԻՏ» ՍՊԸ | «Վարդահովիտ» | 467 | 20.06.2027 | 4250 | 4,94 | Էլեգիս գետի Կարակայա վտակ | 3750 |
| «Հ.Հ.Ն.Մ.Ս.» ՍՊԸ | «Գողթանիկ» | 485 | 30.01.2028 | 1202 | 3,48 | Էլեգիս գետ | 1755,5 |

| | | | | | | | |
|----------------------|--------------|-----|------------|--------|------|-----------------------------|--------|
| «ՄՅՈՒՆՅ ԱՅ ՎՈԹԸ» ՍՊԸ | «Եղեգիս-3» | 491 | 17.04.2028 | 2377,2 | 4,58 | Եղեգիս գետ | 1394 |
| «ՌԱԵԼ ԳԷՍ» ՍՊԸ | «Եղեգիս-2» | 496 | 15.05.2028 | 2110 | 5,77 | Եղեգիս գետ | 2050 |
| «ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» ՍՊԸ | «Վայոց» | 540 | 23.04.2029 | 3050 | 3,54 | Եղեգիս գետի Արտաբույնք վտակ | 2093,0 |
| «ԱՐԱՏԵՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ | «Նանե» | 548 | 11.06.2029 | 3048 | 6,52 | Կարակայա գետի Այսասի վտակ | 2092,0 |
| «ԵՂԵԳ ՀԷԿ» ՍՊԸ | «Եղեգ» | 542 | 13.08.2029 | 1900 | 5,21 | Էլեգիս գետ | 1924 |
| «ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» ՍՊԸ | «Տիգրան Մեծ» | 574 | 29.04.2030 | 2381 | 7,14 | Արփա գետի Եղեգիս վտակ | 2691 |

Հավելված 2

Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանն ուղղված միջոցառումների օրինակներ

| | |
|--|--|
| <p>Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված միջոցառումների օրինակներ <i>Կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումներն ուղղված են կլիմայի փոփոխության բացասական հետևանքների մեղմմանը և դրանց նկատմամբ հասարակության դիմակայունության բարձրացմանը:</i></p> | <p>Կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված միջոցառումների օրինակներ <i>Կլիմայի փոփոխության մեղմման միջոցառումներն ուղղված են ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը:</i></p> |
| <ol style="list-style-type: none"> 1. Բնական աղետների ռիսկերի կառավարման պլանների մշակում ու իրականացում 2. Հողային և ջրային ռեսուրսների արդյունավետության բարելավում, կառավարման ենթակառուցվածքների զարգացում 3. Համայնքային անտառների, խոնավ տարածքների և գետերի ավիամերձ տարածքների պաշտպանություն 4. Կայուն օրգանական գյուղատնտեսության մշակաբույսերի զարգացում՝ սորտերի | <ol style="list-style-type: none"> 1. Հանածո վառելիքի օգտագործման նվազեցում, վերականգնվող էներգիայի աղբյուրների տեսակարար կշռի ավելացում համայնքային և անհատական սեկտորում 2. Էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կիրառում համայնքային շենքերում և ծառայությունների և տնային տնտեսություններում /շենքերի ջերմամեկուսացում, էներգաարդյունավետ ջեռուցման և հովացման համակարգերի |

| | |
|--|---|
| <p>փոփոխություն, որոգման ժամանակակից մեթոդների կիրառում, ջրամբարաշինություն</p> <p>5. Կայուն քաղաքաշինություն՝ կանաչ տարածքների ավելացում</p> <p>6. Առողջապահական համակարգերի կարողությունների զարգացում՝ կլիմայի փոփոխության հետ կապված հիվանդությունների կանխարգելման և կառավարման միջոցառումների մշակում, իրականացում</p> <p>7. Էներգախնայողության նոր տեխնոլոգիաների զարգացում, վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործում</p> <p>8. Միջազգային համագործակցության ընդլայնում՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների մշակման և իրականացման, փորձի փոխանակման և տեխնոլոգիաների փոխանցմանն ուղղված գործողությունների իրականացում</p> <p>9. Համայնքի իրազեկման բարձրացում կլիմայի փոփոխության և դրա ազդեցության վերաբերյալ, տեղեկատվության տարածում</p> <p>10. Գյուղատնտեսական արտադրությունում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների բացասական ազդեցությունը մեղմող միջոցառումների իրականացում</p> <p>11. Անասնակերի որակի բարելավման և արտադրության ծավալների ավելացմանն ուղղված տեխնոլոգիաների ներդրում</p> <p>12. Համայնքում հեղեղումների և սելավների վաղ ազդարարման համակարգերի ներդրում</p> | <p>օգտագործում, էներգախնայողություն/</p> <p>3. Օրգանական թափոնների կոմպոստացում, սննդային թափոնների նվազեցում, անտառահատված տարածքներում գյուղատնտեսական աշխատանքների բացառում</p> <p>4. Գյուղատնտեսական թափոններից բրիկետների արտադրության կազմակերպում</p> <p>5. Անասնապահության թափոններից օրգանական պարարտանյութերի արտադրություն</p> <p>6. Անտառահատումների կանխում, անտառվերականգնում, անտառապատում</p> <p>7. Թափոնների տեսակավորում և վերամշակում, աղբավայրերից ջերմոցային գազերի արտանետումների վերահսկում</p> <p>8. Հեծանիվների և հետիոտնի համար ենթակառուցվածքների զարգացում, էլեկտրական մեքենաների և էկոլոգիապես մաքուր այլ տրանսպորտային միջոցների օգտագործում:</p> <p>9. Կլիմայի փոփոխության մեղմման մասին հանրության իրազեկության բարձրացում:</p> |
|--|---|